

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/13**

**21 հոկտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 01.09.2014 թ-ի թիվ 1426389 վարչական ակտի դեմ:

**«Գրանդ Դիլինգ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ ՕՀՎ 21-րդ բաժնի պետի կողմից 01.09.2014 թ-ին ընդունվել է թիվ 1426389 վարչական ակտը՝ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ (այսուհետ՝ Ակտ), որով «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով ենթարկվել է տուգանքի 265.232 դրամի չափով:

Տուգանքը նշանակվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի և նույն օրենքի Հավելված 4-ով սահմանված դրույթների սխալ կիրառմամբ, ուստի սույնով վարչական կարգով բողոքարկվում ք Ակտը՝ ստորև շարադրված հիմքերով ու հիմնավորումներով:

Ակտում, որպես խախտման նկարագրություն նշվում է. «Ս.թ. օգոստոսի 28-ին «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ի կողմից, «Գագ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի բեռնատարով առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթի ք.Արմավիր է տեղափոխվել ծխախոտ ընդհանուր արժեքով՝ 530.465 դրամ, որով խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ով սահմանված կարգի պահանջները»:

Ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ ՕՀՎ աշխատակիցների կողմից 28.08.2014 թ-ին կազմված թիվ 1426389 արձանագրությունը, որը ունի նույն բովանդակությունը:

Ակտում կամ արձանագրության մեջ նշված չէ, թե Հավելված 4-ով սահմանված կարգի որ պահանջն է խախտվել, ենթադրվում է, որ արձանագրվածը վերաբերում է առաքվող կամ տեղափոխվող ապրանքի ուղեկցող փաստաթղթի առկայության պահանջին: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ի 2-րդ կետի համաձայն, առաքվող ապրանք է համարվում հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերից կամ կետերից, ինչպես նաև մաքսատնից (մաքսակետից) առուվաճառքի, մատակարարման, փոխանակության, կոմիսիայի, գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կամ առանց դրանց գնորդին (ստացողին) կամ նրա նշած անձին հանձնվող (այդ թվում՝ տեղ հասցնելու կամ փոխադրողին հանձնելու պայմանով)՝ իրացվող, հատկացվող, բաց թողնվող, տրամադրվող կամ ցանկացած այլ ձևով օտարվող (այդ թվում՝ անհատույց) ապրանքը:

Նույն 2-րդ կետի համաձայն, տեղափոխվող ապրանք է համարվում հարկ վճարողի կողմից իր առաքման վայրերի և (կամ) կետերի միջև տեղափոխվող, իր առաքման վայրերից մաքսատուն կամ մաքսակետ տեղափոխվող կամ պահատվության, հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով կամ վերամշակման հանձնվող կամ հետ վերադարձվող կամ վերամշակման ընդունված ապրանքանյութական արժեքների վերամշակման արդյունքում վերադարձվող կամ որևէ առաքման վայրից կամ կետից ձեռք բերված և տեղափոխվող (այդ թվում՝ փոխադրողի միջոցով) ապրանքը:

Նույն կետով սահմանված է նաև, որ առաքման կետ է համարվում տրանսպորտային միջոցը, որն օգտագործվում է նախապես անհայտ գնորդներին հարկ վճարողի կողմից իր ապրանքներն առաքելու համար:

Տվյալ դեպքում ավտոմեքենայում գտնվող ապրանքը չի կարող համարվել տեղափոխվող ապրանք, քանի որ այն ընկերության առաքման վայրի կամ կետերի միջև տեղափոխվող ապրանք չէ: Տվյալ ապրանքը տեղափոխվող ապրանք եղել է պահեստից ավտոմեքենա բեռնելու պահին, այսինքն՝ առաքման վայրից առաքման կետ տեղափոխելու ժամանակ: Իսկ դրանից հետո ապրանքը տեղափոխվող ապրանք չէ, քանի որ այն արդեն տեղափոխված է առաքման կետ և գտնվում է այնտեղ, ընկերության մեկ այլ տարածք տեղափոխման ընթացքում չի եղել: Իսկ պահեստից ավտոմեքենա ապրանքը տեղափոխվել է համապատասխան բեռնագրով և գրանցվել պահեստի գրքում:

Օրենքի սահմանումներից երևում է, որ առաքվող ապրանքը գնորդին հանձնվող ապրանքն է, այսինքն, տվյալ ապրանքի գնորդը պետք է հայտնի լինի: Տվյալ դեպքում ապրանքի գնորդը հայտնի չէ, բացակայում է առաքվող ապրանք որակելու պարտադիր պայմանը: Ապրանքը եղել է ավտոմեքենայում, որը հանդիսանում է առաքման կետ: Առաքման կետի սահմանումից էլ ակնհայտ է, որ ավտոմեքենայում գտնվող ապրանքի հավանական գնորդը դեռևս անհայտ է:

Հավելված 4-ի 4-րդ կետով սահմանված՝ ուղեկցող փաստաթղթի վավերապայմաններից են առաքվող կամ տեղափոխվող ապրանքների նշանակման վայրի հասցեն, առաքվող կամ տեղափոխվող ապրանքի գնորդի (ստացողի)՝ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող տվյալները, ֆիզիկական անձանց համար՝ անունը, ազգանունը:

Տվյալ դեպքում այդ վավերապայմաններն ապահովվելը վերը նշված պատճառով հնարավոր չէ, ինչը ևս մեկ անգամ հաստատում է ներկայացված այն հետևությունը, որ առաքման կետում գտնվող ապրանքը առաքվող կամ տեղափոխվող ապրանք համարվել չի կարող: Նույն կերպ առաքվող կամ տեղափոխվող ապրանք չի համարվում նաև առաքման վայրում՝ պահեստում գտնվող ապրանքը: Իսկ ավտոմեքենան տվյալ դեպքում նույն կարգավիճակն ունի, ինչ պահեստը:

Ինչ վերաբերում է արձանագրությամբ նշված Աղաջան Սիմոնյանի հայտարարությունը, որով նա իբր հայտնել է, որ ապրանքի ուղեկցող փաստաթուղթը թողել է պահեստում, ապա արձանագրությամբ փոփոխված է հայտարարության բովանդակությունը: Ա.Սիմոնյանի հայտարարությունը վերաբերում է ոչ թե ապրանքի ուղեկցող փաստաթղթին, այլ՝ ապրանքի փաստաթղթին, որպիսին հանդիսանում է պահեստից ավտոմեքենա բեռնելու համար դուրս գրված բեռնագիրը, որը ավտոմեքենայում պահելու պահանջ օրենքը չի սահմանում:

Նշվածից հետևում է, որ խնդրո առարկա ապրանքների, որպես առաքման կետում առկա ապրանքների, մասով ուղեկցող փաստաթղթի առկայության պահանջ օրենքով սահմանված չէ, առաքման կետում առկա ապրանքները չեն կարող համարվել որպես առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքներ, հետևաբար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 01.09.2014 թ. թիվ 1426389 վարչական ակտը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ ՕԿՎ 21-րդ բաժնի պետը 01.09.2014 թ-ին ընդունել է թիվ 1426389 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ին առաջադրվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 265.232 դրամ:

Վարչական ակտով մասնավորապես արձանագրվել է, որ ս.թ. օգոստոսի 28-ին ժամը 12:05-ին «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ի կողմից «Գագ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի

բեռնատարով առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթի ք.Արմավիր է տեղափոխվել ծխախոտ ընդհանուր արժեքով՝ 530.465 դրամ, որով խախտվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի Հավելված 4-ով սահմանված կարգի պահանջները: Արդյունքում, վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Քննարկման ընթացքում Ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ին պատկանող «Գազ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի բեռնատար մեքենայի համար ընկերությունը ունի առաքվող կամ տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային գիրք (այսուհետ նաև էլեկտրոնային գիրք):

Ընկերության ներկայացուցիչը նշեց նաև, որ վարչական ակտում հիշատակված ծխախոտի տեղափոխումը սահմանված կարգով գրանցվել է «Գազ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի բեռնատար մեքենայի էլեկտրոնային գրքում: Ընդ որում, գրանցումը կատարվել է նախապես՝ մինչև մեքենայի մեկնելը:

ՀՀ ՖՆ ՕՀՎ 21-րդ բաժնի ներկայացուցիչներին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե խախտումն արձանագրելու պահին ստուգվել է արդյոք տեղափոխվող ապրանքները վերոգրյալ մեքենայի էլեկտրոնային գրքում գրանցված լինելու հանգամանքը, հնչեց պատասխան, որ նշված հանգամանքն իրենց կողմից չի ստուգվել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայության տեղեկատվական բազայում առկա տվյալների ուսումնասիրությամբ պարզվեց, որ իրոք, «Գազ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի բեռնատար մեքենայի համար ընկերությունը ունի առաքվող կամ տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային թիվ 02259848V10 գիրքը: Պարզվեց նաև, որ վարչական ակտում հիշատակված ծխախոտի տեղափոխումը նախապես գրանցվել է «Գազ» մակնիշի 306 LD 61 պետհամարանիշի բեռնատար մեքենայի էլեկտրոնային գրքում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

...

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ խախտումը հիմնավորող համապատասխան ապացույցների բացակայության պայմաններում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ ՕՀՎ 01.09.2014 թ-ի թիվ 1426389 վարչական ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ